ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՐՄԱՆ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Անտոնյան,

Ի պատասխան Ձեր 04.10.2021թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունում առկա են Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատանքներն ամբողջությամբ իրականացնելու համար Երևան համայնքի ֆինանսական միջոցները բավարար չեն, ուստի որոշում է կայացվել այն իրականացնել փուլային տարբերակով:

Տեղեկացվում է, որ վարչության 2021թ. աշխատանքային ծրագրերով արդեն իսկ իրականացվել են մարզադպրոցի տանիքի հիմնանորոգման աշխատանքները, իսկ 2022թ. աշխատանքային ծրագրերով նախատեսված է իրականացնել մարզադպրոցի մեծ մարզադահլիճի, սանհանգույցների և հանդերձարանների հիմնանորոգման աշխատանքներ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ «Երևանի Շենգավիթի նետաձգության մարզակումբ» ՀՈԱԿ-ի նկուղային հարկի վերանորոգման նպատակով բյուջետային միջոցների նախատեսումը դիտարկելու համար անհրաժեշտ է ներկայացնել ծախսը հիմնավորող նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ հաշվի առնելով ծախսի կապիտալ բնույթը, իսկ համապատասխան գույքի ձեռք բերումն ըստ տրամաբանության կարող է դիտարկվել կազմակերպության վերանորոգումից հետո:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ